



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ info_yeghegnadzor@aarhus.am, narekbeq@yahoo.com

Ե-14/14

22 սեպտեմբեր

ՀՀ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարար
Երվանդ Զախարյանին
Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող
Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

- Բացի ոսկիից, ևս ի՞նչ մետաղներ է պարունակում Ազատեկի բազմամետաղային ոսկու հանքը:
- Մեկ տոննայում ո՞րքան է կազմում Ազատեկի բազմամետաղային ոսկու հանքի մետաղային բաղադրիչների և այլ նյութերի քանակը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյան